Բաժնի պետը

1. Ապահովում է Մարզպետին և Գլխավոր քարտուղարին ՀՀ օրենսդրությամբ տրված լիազորությունների և գործունեության օպերատիվության ու արդյունավետության կազմակերպումը.
2. Ապահովում է մարզպետի աշխատակազմի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից Մարզպետի և Գլխավոր քարտուղարի քննարկմանը ներկայացվող իրավական ակտերի՝ որոշումների և հրամանների նախագծերի ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխանության ստուգման աշխատանքները.
3. Ապահովում և իրականացնում է մարզպետի աշխատակազմի, Մարզի համայնքների և մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպությունների իրավական աջակցության ցուցաբերման աշխատանքները.
4. Ապահովում է քաղաքացիների և պաշտոնատար անձանց ընդունելության, անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվության և համապատասխան տեղեկատվության տրամադրման աշխատանքները.
5. Կազմակերպում է քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ Բաժնին հասցեագրված նամակների /դիմումներ, բողոքներ, առաջարկություններ/ քննարկումը և սահմանված ժամկետում դրանց ընթացքի ապահովումը.
6. Ապահովում է Բաժնի մասնակցությունը իր իրավասությանը պատկանող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի / համաձայնագրերի/ նախագծերի մշակմանն ու քննարկմանը.
7. Ապահովում և իրականացնում է վարչական և կարգապահական խախտումների հետ կապված գործերի վարման աշխատանքները.
8. Ապահովում և իրականացնում է իրավապահ մարմիններից ստացվող նյութերի քննարկման արդյունքների ամփոփման աշխատանքները.
9. Ապահովում և իրականացնում է համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգումը.
10. Ապահովում և իրականացնում է Բաժնին վերապահված լիազորությունների շրջանակներում Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները.
11. Ապահովում և իրականացնում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Բաժնին վերապահված գործառույթները.
12. Ապահովում և իրականացնում է Մարզպետի նորմատիվ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման և իրավական փորձաքննության ներկայացման աշխատանքները: